



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2008թ. ապրիլին /վերլուծություն/

2008թ. ապրիլին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 13870 գործարքներ, որոնց քանակը 2007թ. ապրիլի համեմատ աճել է 18.7%-ով, իսկ 2008թ. մարտի համեմատ՝ 6.1%-ով:

2008թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2008թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2008թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4841 օտարման գործարքների 81.3% կազմել են առուվաճառքները, 17.0%՝ նվիրատվությունները և 1.7%՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 33.9%

արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 34.2% հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2008թ. ապրիլին, 2008թ. մարտի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 16.0%-ով, իսկ 2007թ. ապրիլի համեմատ՝ 8.0%-ով:

2008թ. ապրիլին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 56.4% արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2008թ. մարտի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 12.4%-ով, իսկ 2007թ. ապրիլի համեմատ նվազել՝ 12.6%-ով:

2008թ. ապրիլին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	ապրիլ 2007թ.	ապրիլ 2008թ.	մարտ 2008թ.
Կենտրոն	439700	471300	466000
Արաբկիր	346800	409900	395600
Քանաքեռ-Զեյթուն	250800	306800	296900
Նոր-Նորք	219000	270300	263200
Ավան	201700	268100	260000
Էրեբունի	212600	267000	258000
Շենգավիթ	227700	274200	266900
Դավթաշեն	233400	283200	275000
Աջափնյակ	221500	280000	269900
Մալաթիա-Սեբաստիա	207000	260300	255200
Նուբարաշեն	120000	151500	146700
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	243700	294800	286700

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2008թ. ապրիլին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2008թ. մարտի համեմատ աճել են 2.8 %-ով:

2008թ. ապրիլին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 477 բնակարաններ, որոնց քանակը 2008թ. մարտի համեմատ աճել է 6.2%-ով, իսկ 2007թ. ապրիլի համեմատ նվազել է՝ 9.3%-ով:

2008թ. ապրիլին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		ապրիլ 2007թ.	ապրիլ 2008թ.	մարտ 2008թ.
Արագածոտն	Աշտարակ	97600	121500	116800

	Ապարան	28500	33000	32000
	Թալին	35000	42000	40700
Արարատ	Արտաշատ	77800	94300	91900
	Մասիս	84900	124500	124000
	Վեդի	57000	79100	76800
	Արարատ	54600	59400	58900
Արմավիր	Վաղարշապատ	119800	162500	159100
	Արմավիր	83700	115000	114700
	Մեծամոր	54500	76300	74600
Գեղարքունիք	Սևան	56000	85600	82500
	Գավառ	33600	44100	43900
	Մարտունի	48900	68200	65900
	Վարդենիս	26200	30500	29800
	Ճամբարակ	14200	15900	15800
Լոռի	Վանաձոր	67000	86200	84600
	Ստեփանավան	32300	45500	44700
	Մայիսակ	43900	60400	60300
	Ալավերդի	24200	29300	28300
	Տաշիր	23400	30500	29600
	Թումանյան	5400	5600	5600
	Շամլուղ	3000	3200	3200
Կոտայք	Աբովյան	134400	168800	161300
	Նոր Հաճն	93800	121300	117200
	Բյուրեղավան	67500	95700	91100
	Եղվարդ	83100	112000	107500
	Հրազդան	47700	65100	62400
	Ծաղկաձոր	87000	142600	142500
	Չարենցավան	56640	87000	82900
Շիրակ	Գյումրի	64400	92100	88400
	Արթիկ	41500	53600	53500
	Մարալիկ	24100	26400	26300
Սյունիք	Գորիս	67500	101000	96600
	Կապան	60900	86200	83500
	Սիսիան	50600	68400	65600
	Մեղրի	35600	45100	45100
	Ագարակ	23300	28900	28800
	Քաջարան	31000	46000	44100
	Դաստակերտ	6800	7000	7000
Վայոց Ձոր	Վայք	55400	73300	70000
	Եղեգնաձոր	67100	95000	91000
	Զերմուկ	102800	123500	123400
Տավուշ	Դիլիջան	61000	86000	82800
	Իջևան	82300	115200	115000
	Բերդ	33000	37700	37600
	Նոյեմբերյան	27800	29900	29900
	Այրում	18000	21100	21100

2008թ. ապրիլին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2008թ. մարտի համեմատ աճել են 2.5%-ով:

2008թ. ապրիլին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 542 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 137, մյուս մարզերում միասին վերցրած՝ 405: 2008թ. մարտի համեմատ, անհատական բնակելի

տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է՝ 10.6%-ով, ընդ որում Երևանում՝ 47.3%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 2.0%-ով: 2007թ. ապրիլի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 3.0%-ով, ընդ որում Երևանում՝ 26.9%-ով, իսկ մյուս մարզերում նվազել՝ 3.1%-ով:

2008թ. ապրիլին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	ապրիլ 2007թ.	ապրիլ 2008թ.	մարտ 2008թ.
Կենտրոն	444700	489000	487700
Արաբկիր	351400	414700	402700
Քանաքեռ-Զեյթուն	254400	312200	308700
Նորք-Մարաշ	222600	278400	272600
Ավան	206500	272800	271000
Էրեբունի	220000	268600	267600
Շենգավիթ	231700	275600	274700
Դավթաշեն	241500	290900	289700
Աջափնյակ	226300	282800	276300
Մալաթիա-Մեքաստիա	210500	270900	268700
Նուբարաշեն	123100	157100	156100
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	248400	301200	297800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2008թ. ապրիլին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2008թ. մարտի համեմատ աճել են 1.1 %-ով:

2008թ. ապրիլին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		ապրիլ 2007թ.	ապրիլ 2008թ.	մարտ 2008թ.
Արագածոտն	Աշտարակ	100900	124500	121200
	Ապարան	33000	35500	34900
	Թալին	37900	45000	44500
Արարատ	Արտաշատ	80300	99500	98400
	Մասիս	88700	128200	126000
	Վեդի	59900	85200	82600
	Արարատ	58600	64900	64300
Արմավիր	Վաղարշապատ	121900	164800	161100

	Արմավիր	88000	120600	119000
Գեղարքունիք	Սևան	59500	87800	84500
	Գավառ	37100	46200	45600
	Մարտունի	51800	70000	68400
	Վարդենիս	29500	32700	32300
	Ճամբարակ	17100	19800	19600
Լոռի	Վանաձոր	71900	91400	89900
	Ստեփանավան	37300	51000	50200
	Սպիտակ	48200	65500	64400
	Ալավերդի	27900	31300	30800
	Տաշիր	26600	34000	33500
	Թումանյան	7800	9600	9400
	Շամլուղ	5000	6400	6300
Կոտայք	Աբովյան	139800	172700	166200
	Նոր Հաճն	101000	124100	122500
	Բյուրեղավան	70400	97300	93500
	Եղվարդ	87000	115400	111800
	Հրազդան	51300	66700	65700
	Ծաղկաձոր	109000	217700	209000
	Չարենցավան	58900	88400	85100
Շիրակ	Գյումրի	67800	96600	95500
	Արթիկ	44800	57100	56300
	Սարալիկ	27100	30700	30100
Սյունիք	Գորիս	70100	103000	98600
	Կապան	64100	89600	87600
	Սիսիան	54500	71100	69700
	Մեղրի	39300	48800	48500
	Ագարակ	26600	31800	31400
	Դաստակերտ	9600	10200	10100
Վայոց Ձոր	Վայք	58500	77100	75800
	Եղեգնաձոր	69600	98800	96600
	Ջերմուկ	48300	76000	73500
Տավուշ	Դիլիջան	65200	90700	88400
	Իջևան	84900	121800	118900
	Բերդ	35900	40200	40100
	Նոյեմբերյան	30100	35300	35200
	Այրում	19200	22800	22800

2008թ. ապրիլին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2008թ. մարտի համեմատ աճել են 2.3%-ով:

Ընդհանուր առմամբ, 2008թ. ապրիլին հանրապետությունում օտարվել են 1883 միավոր /1740.12 հա/ հողեր, որից Երևանում` 162 միավոր /22.83 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 65 միավոր /13.60 հա/ հողեր, որից Երևանում` 29 միավոր /4.55 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր` 807 միավոր /1629.57 հա/, որից Երևանում` 5 միավոր /0.35 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր` 713 միավոր /63.71 հա/, որից Երևանում` 100 միավոր /8.75 հա/,

- հասարակական կառուցապատման հողեր՝ 315 միավոր /20.62 հա/, որից Երևանում՝ 53 միավոր /8.78 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 27 միավոր /19.39 հա/, որից Երևանում՝ 4 միավոր /4.95 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 14 միավոր /6.29 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 7 միավոր /0.53 հա/

2008թ. ապրիլին հանրապետությունում օտարված հողերից 1751 միավորի /1641.06 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 156 միավոր /21.98 հա/, նվիրատվության գործարքներ՝ 111 միավորի /95.19 հա/, որից Երևանում՝ 1 միավոր /0.32 հա/ և փոխանակության գործարքներ՝ 21 միավորի /3.87 հա/, որից Երևանում՝ 5 միավոր /0.54 հա/:

Հանրապետությունում 2008թ. ապրիլին, 2007թ. ապրիլի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 7.8%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 4.0%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ աճել՝ 8.4%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել՝ 35.0%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 945.65 հա, որից 936.32 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 34.2% կամ 598 գործարքներ /290.91 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 50 գործարքներ /12.65 հա/, իսկ 65.7% կամ 1150 միավորը /1350.10 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 105 միավոր /9.32 հա/: 2008թ. ապրիլին հանրապետությունում գրանցվել են հողերի կառուցապատման իրավունքի վաճառքի 3 գործարք /0.05 հա/:

Ստորև ներկայացվում է 2008թ. ապրիլին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ մարզերի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները:

ՄԱՐԶԻ ԱՎԱՆՈՒՄԸ	<i>Չետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>								<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	4	4.95	16	2.22	30	5.47	5	0.35	0	0.00	82	6.17	18	2.80
Արագածոտն	21	24.42	0	0.00	0	0.00	10	0.45	76	90.22	0	0.00	46	4.56	2	0.01
Արարատ	17	42.68	6	6.18	27	1.42	28	2.38	78	32.09	1	0.01	65	5.59	3	0.20
Արմավիր	12	39.40	2	0.51	5	0.60	19	0.32	140	896.92	1	0.10	90	7.69	5	0.11
Գեղարքունիք	4	1.77	0	0.00	35	5.25	19	0.45	77	33.97	0	0.00	23	2.95	3	0.01
Լոռի	2	1.33	0	0.00	4	0.50	35	0.46	36	44.43	0	0.00	10	1.12	3	0.76
Կոտայք	42	52.59	3	0.84	52	3.90	52	2.92	130	75.91	0	0.00	128	11.45	7	0.51

Շիրակ	0	0.00	1	1.10	37	1.34	21	0.74	17	95.20	1	0.04	12	1.13	5	0.08
Սյունիք	4	37.55	0	0.00	6	0.54	17	0.48	11	6.39	0	0.00	3	0.40	2	0.05
Վայոց Ձոր	4	0.84	1	0.06	1	0.04	12	0.06	14	11.35	1	0.05	3	0.34	2	1.57
Տավուշ	12	39.56	4	5.48	11	0.52	10	0.06	31	9.21	1	0.06	9	0.99	0	0.00
Ընդամենը	118	240.14	21	19.12	194	16.33	253	13.79	615	1296.04	5	0.26	471	42.39	50	6.10

Ստորև ներկայացվում է 2008թ. ապրիլին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	32	8.39	4	4.95	10	0.61	18	2.83	18	4.27	0	0.00	0	0.00	6	1.62	12	2.65
Արագածոտն	4	0.09	0	0.00	0	0.00	4	0.09	27	24.78	21	24.42	0	0.00	0	0.00	6	0.36
Արարատ	8	0.12	2	0.03	1	0.02	5	0.07	70	52.54	17	42.68	4	6.14	26	1.40	23	2.32
Արմավիր	13	0.07	1	0.01	0	0.00	12	0.06	25	40.76	12	39.40	1	0.50	5	0.60	7	0.26
Գեղարքունիք	12	0.57	0	0.00	6	0.46	6	0.11	46	6.90	4	1.77	0	0.00	29	4.79	13	0.34
Լոռի	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	41	2.29	2	1.33	0	0.00	4	0.50	35	0.46
Կոտայք	15	1.63	2	0.83	3	0.03	10	0.77	132	58.52	40	52.47	1	0.02	49	3.88	42	2.15
Շիրակ	7	0.12	0	0.00	6	0.11	1	0.01	52	3.06	0	0.00	1	1.10	31	1.23	20	0.73
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	27	38.57	4	37.55	0	0.00	6	0.54	17	0.48
Վայոց Ձոր	1	0.06	1	0.06	0	0.00	0	0.00	17	0.94	4	0.84	0	0.00	1	0.04	12	0.06
Տավուշ	11	5.19	1	4.87	8	0.32	2	0.004	25	40.40	11	39.53	3	0.61	3	0.20	8	0.06
Ընդամենը	103	16.24	11	10.75	34	1.55	58	3.94	480	273.03	115	239.99	10	8.37	160	14.80	195	9.87

Հանրապետությունում 2008թ. ապրիլին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 3 գործարք /0.15 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2008թ. ապրիլին 2007թ. ապրիլի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 16.8%-ով: Ընդ որում, Երևանում մնացել է անփոփոխ, իսկ մյուս մարզերում միասին վերցրած նվազել՝ 17.3%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 48.9%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ աճել՝ 2.1 անգամ, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել՝ 27.2%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել՝ 9.10%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2008թ. ապրիլին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Մեծագույն	Միջին			Նվազագույն	Մեծագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	21	24.42	37.8	846.7	164.9	44	74.90	365.0	12000.0	3198.5
Ապարան						8	6.13	86.5	2727.3	415.5
Թալին						7	2.53	93.6	5494.5	442.2
Ծաղկահովիտ						12	4.75	79.5	1000.0	188.5
Արարատի մարզ										
Արտաշատ						43	12.37	335.1	10833.3	1685.5
Մասիս	5	17.70	62.7	513.1	242.0	12	5.74	200.0	11904.8	2112.8
Վեդի	12	24.98	30.0	710.1	190.9	23	13.97	207.0	10795.1	1472.5
Արմավիրի մարզ										
Արմավիր	5	23.50	31.5	1523.4	470.7	58	51.04	294.3	9090.0	1075.5
Բաղրամյան	4	8.62	35.4	35.4	35.4	31	822.83	90.6	2561.1	634.1
Վաղարշապատ	3	7.28	118.6	3610.0	2443.4	49	21.65	444.4	11764.7	1902.5
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						37	17.95	199.8	1875.0	410.5
Ճամբարակ	3	0.25	740.0	1240.0	1013.3	33	8.99	60.5	953.3	170.1
Մարտունի						5	0.85	51.1	2850.0	492.3
Սևան								52.2	2134.8	210.1
Վարդենիս	1	1.52	202.6	202.6	202.6	2	6.19	41.2	2575.1	280.3
Լոռու մարզ										
Այվերդի	2	1.33	215.4	229.4	222.4	7	5.44	170.4	6424.2	1142.8
Գուգարք						1	0.36	234.6	6065.9	974.1
Սպիտակ						1	0.07	250.0	5555.5	541.1
Ստեփանավան						13	10.81	90.6	1686.6	398.2
Տաշիր						14	27.76	45.3	1384.4	217.1
Կոտայքի մարզ										
Աբովյան	21	32.33	35.3	837.0	272.5	49	22.71	279.3	11942.7	3894.2
Եղվարդ	19	20.14	52.1	1000.0	371.6	60	25.87	174.4	11971.8	2724.2
Հրազդան						17	24.45	130.5	10256.4	1092.4
Շիրակի մարզ										
Ախուրյան						8	6.04	252.0	1693.1	475.5
Ամասիա						3	80.49	40.9	261.0	120.0
Անի						6	8.67	110.6	546.9	267.5
Աշոցք								58.5	215.8	118.5
Արթիկ								79.4	1428.6	184.8
Սյունիքի մարզ										
Գորիս						3	4.36	92.6	1023.2	371.5
Կապան	4	37.55	306.4	1135.8	653.4	2	0.47	120.0	841.6	245.2
Մեղրի						3	0.45	193.0	3000.0	525.4
Սիսիան						3	1.11	46.3	1977.4	262.8
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	3	0.69	43.1	429.8	300.9	2	0.38	125.0	10000.0	1342.5
Վայք	1	0.15	46.1	46.1	46.1	12	10.97	58.8	1430.7	522.3
Տավուշի մարզ										
Բերդ	4	1.43	147.1	5250.0	1571.7	24	6.42	213.3	3783.8	390.5
Իջևան	4	30.00	285.0	394.0	339.5	2	1.15	267.5	9454.5	852.4
Նոյեմբերյան	3	8.10	525.0	735.0	665.0	5	1.64	46.7	7368.4	583.4

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2008թ. ապրիլին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						40	34639.0	130.7	22200.0	2515.4
Ապարան								124.1	609.6	208.5
Թալին						2	2800.0	63.2	1454.8	105.5
Ծաղկահովիտ						4	8203.0	100.0	214.3	71.2
Արարատի մարզ										
Արտաշատ	7	5400.0	150.0	460.6	349.7	15	15723.0	173.9	7140.3	921.2
Մասիս	13	2990.0	514.5	1608.9	848.8	36	27230.0	187.5	25000.0	1206.4
Վեդի	6	5580.0	417.4	418.3	417.9	14	12934.0	126.1	5000.0	672.3
Արմավիրի մարզ										
Արմավիր	5	6000.0	277.3	277.3	277.3	30	22256.0	131.6	9090.9	1201.2
Բաղրամյան								100.0	833.3	141.0
Վաղարշապատ						60	54621.0	197.4	26528.4	1535.5
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						9	9950.0	186.6	1084.3	380.1
Ճամբարակ						1	2825.0	71.3	2286.2	103.2
Մարտունի	14	9022.0	110.9	113.7	112.9	6	7736.0	119.3	5000.0	268.5
Սևան	15	38890.0	188.1	429.8	361.7	5	6635.0	240.0	3110.4	169.5
Վարդենիս						2	2320.0	72.5	987.2	122.0
Լոռու մարզ										
Ալավերդի						1	1260.0	114.3	1388.9	139.2
Գուգարք	1	400.0	3087.0	3087.0	3087.0	4	4003.0	77.9	14083.3	584.2
Մայիսակ						3	4650.0	104.9	1348.3	138.58
Ստեփանավան	3	4600.0	57.5	264.0	195.2			88.2	1666.7	112.2
Տաշիր						1	660.0	45.3	400.0	70.2
Կոտայքի մարզ										
Աբովյան	2	2000.0	409.0	2295.0	1352.0	55	47951.0	264.5	35353.5	1985.5
Եղվարդ	40	30544.0	1463.4	4080.0	3417.1	62	59043.0	173.6	27000.0	2098.2
Հրազդան	7	6224.0	393.0	2937.0	923.3	11	7479.0	117.7	34848.5	1336.7
Շիրակի մարզ										
Ախուրյան	25	10327.0	290.4	5208.3	1831.5	1	1400.0	113.6	18750.0	330.8
Ամասիա						1	4820.0	45.3	274.7	70.1
Անի								67.9	180.6	98.6
Աշոցք						1	1490.0	40.8	144.0	58.1
Արթիկ	6	1997.0	52.5	211.4	158.1	9	3604.0	111.8	5000.0	180.4
Սյունիքի մարզ										

Գործիս	3	3750.0	152.0	178.6	163.5			112.2	1700.0	248.5
Կապան								67.9	2638.9	208.5
Մեղրի	3	1671.0	296.2	296.2	296.2	1	1733.0	68.5	632.9	128.5
Սիսիան						2	2220.0	123.5	875.0	146.2
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	1	400.0	750.0	750.0	750.0	3	3382.0	96.7	7659.6	315.6
Վայք								120.7	1448.3	121.4
Տավուշի մարզ										
Բերդ						1	1500.0	75.8	810.0	88.1
Իջևան	3	1988.0	1430.0	2200.0	1943.3	7	7680.0	74.1	14423.1	445.2
Նոյեմբերյան						1	710.0	125.0	1948.1	141.8

2008թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1127 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 8.1%: Ընդ որում, վարձակալության գործարքների 41.2% իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2008թ. ապրիլին 2008թ. մարտի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 12.8%-ով, իսկ 2007թ. ապրիլի համեմատ՝ 32.0%-ով:

2008թ. ապրիլին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 59 բնակարանների, 49 անհատական բնակելի տների, 350 հասարակական, 64 արտադրական նշանակության օբյեկտների, 581 միավոր /3655.68 հա/ հողերի, և 24 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2008թ. ապրիլին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 51 վարձակալության գործարքների /այդ թվում 13 միավոր /0.13 հա/ կառուցապատման իրավունքով/ քանակը 2008թ. մարտի համեմատ աճել է 50.0%-ով, իսկ 2007թ. ապրիլի համեմատ՝ 82.1%-ով:

2008թ. ապրիլին հանրապետությունում վարձակալված 3655.68 հա հողերից 5.78 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 3649.91 հա հողերի 10.79 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 1237.32 հա, որից 1230.12 հա գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 453.20 հա հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2008թ. ապրիլին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

Մարզի անվանումը	Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի		Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	0	0.00	34	155.70
Արարատ	0	0.00	3	3.57
Արմավիր	0	0.00	24	34.43
Գեղարքունիք	0	0.00	54	333.80
Լոռի	0	0.00	32	160.01
Կոտայք	0	0.00	14	123.20
Շիրակ	0	0.00	17	54.06
Սյունիք	1	453.20	143	776.92

Վայոց Ձոր	0	0.00	2	10.03
Տավուշ	0	0.00	0	0.00
Ընդամենը	1	453.20	323	1651.72

2008թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2496 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 18.0%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2008թ. մարտի համեմատ աճել է 11.7%-ով, իսկ 2007թ. ապրիլի համեմատ՝ 23.3%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /47.0%/, առանձնատների /25.5%/, հասարակական նշանակության օբյեկտների /11.0%/ և հողերի /12.4%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1042 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2008թ. մարտի համեմատ աճել է 21.0%-ով, իսկ 2007թ. ապրիլի համեմատ՝ 29.6%-ով:

2008թ. ապրիլին հանրապետությունում գրավադրվել են 411.92 հա հողեր, որից 10.63 հա՝ Երևանում: Ընդ որում հողերի 94.5%-ը կամ 389.11 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 0.35 հա: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 132.20 հա, որից 132.11 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2008թ. ապրիլին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 298 գործարքներ, որից 188-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքներից 70.1%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակականների, 22.2%-ն՝ անհատական բնակելի տների, 4.0%-ն՝ հասարակական նշանակության օբյեկտների, 1.3%-ը՝ ամառանոցների, 1.7%-ը հողերի, 0.7%-ն՝ ավտոտնակների նկատմամբ: 2008թ. մարտի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 40.6 %-ով, ընդ որում Երևանում՝ 29.7%-ով, իսկ մարզերում՝ 64.2%-ով:

2008թ. ապրիլին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման համապատասխանաբար 5 և 4 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.1%: 2008թ. մարտի և 2007թ. ապրիլի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը աճել է 28.6%-ով: 2008թ. ապրիլին մասնավորեցման գործարքներն արձանագրվել են. 4-ը՝ Երևանում, 2-ական՝ Գեղարքունիքի, Տավուշի և 1-ը՝ Սյունիքի մարզերում:

2008թ. ապրիլին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 2267 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2008թ. մարտի համեմատ աճել է 1.7%-ով, իսկ 2007թ. ապրիլի համեմատ՝ 18.3%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.3%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /34.1%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն